## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

# ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 8-ին Օշականում առանձնակի հանդիսավորությամբ տոնախմբվեց Ս. Թարգմանչաց տոնը:

Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակի առիթով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Արագածոտնի թեմի և ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերով նախարարության համատեղ ջանքերով կազմակերպվել էր ուխտագնացություն Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի: Վաղ առավոտյան Հայաստանյան թեմերի, երիտասարդական միությունների, բուհերի և հոգևոր հաստատությունների բազմաթիվ երիտասարդներ համախմբվել էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ս. Տրդատա Բաց Խորանի առջև: Այստեղից ուխտավորները 36 բազմամարդ խմբերով, հոգևորականների առաջնորդությամբ, հոգևոր և հայրենասիրական երգերի հոգեզմայլ երգեցողությամբ սկսեցին իրենց քայլերթը դեպի Օշական: Յուրաքանչյուր խումբ իր հետ տանում էր Հայոց Այբուբենի զարդարուն մեկ տառ, որոնք պետք է զետեղվեին Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հարևանությամբ տեղադրված խաչքար-տառերի կողքին:

Մինչ ուխտավորների քայլերթը կհասներ Օշական, այնտեղ մեկնեց նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու առջև Նորին Սրբությանը դիմավորեցին թեմի հոգևորականները՝ Արագածոտնի թեմի առաջնորդական տեղապահ Տ. Թորգոմ վրդ. Տոնիկյանի առաջնորդությամբ, Արագածոտնի մարզպետ Հրաչ Գյոզալյանը, Աշտարակի քաղաքապետ Ա. Ղալաչյանը, մարզային իշխանությունների այլ ներկայացուցիչներ ու պաշտոնյաներ: «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո Հայոց Հայրապետը առաջնորդվեց եկեղեցի, ուր մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ: Պատարագիչն էր Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը: Պատարագին իր մասնակցությունը բերեցին նաև ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը և կառավարության մի շարք անդամներ: Հընթացս Ս. Պատարագի Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպս. Խաչատրյանն ընթերցեց Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակի առիթով Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը:

Պատարագի ողջ ընթացքին անընդհատ հոսքով ժամանող ուխտավորները և բարեպաշտ ժողովուրդը իջնում էին Ս. Մեսրոպի շիրիմին ծնրադրելու և հայցելու Սրբի բարեխոսությունն ու օրհնությունը:

Հավարտ Սուրբ Պատարագի հոգևորականների թափորն Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ կատարեց եկեղեցու բակում տեղադրված 36 խաչքար-տառերի օրհնության մասնավոր արարողությունը: Հայոց Այբուբենի բոլոր տառերի պատկերմամբ այս

յուրօրինակ խաչքարերի սպեղծմանը քանդակագործ Ռուբեն Նալբանդյանը ձեռնամուխ էր եղել ավելի քան երկու տարի առաջ` Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ:

Խաչքար-փառերի օրհնության արարողությունից հետո Նորին Սրբությունն իր պատգամն ուղղեց բարեպաշտ ժողովրդին: *«Սիրելի հայորդիներ, ձեզ հետ միասին եկել ենք նվիրական սրբավայր` խոնարհվելու շիրիմին Ս. Մեսրոպ Մաշտոցի, հանճարեղ ղառնալու հայոց գրերի խորին խորհրդին, անհաս ու անսկիզբ խորհրդին, որ դարերի մեջ եղել է մեզ համար պեկոծյալ ծովում փարոս լուսավոր: 1600 տարիներ առաջ Աստված մեր ժողովրդին պարգևեց 36 նշանագրեր: Մեր լուսամիտ սուրբ վարդապետ Մեսրոպ Մաշտոցը աստվածապարգև խորհուրդը արձանագրեց դարերի ու սերունդների համար, արձանագրեց որպես պատգամ: ...Այս ճշմարիտ խորհուրդը դարերի մեջ մենք դարձրինք մեր կյանքի նշանաբան և ապրեցինք այն Քրիստոսով, Նրա սիրո ու միաբանության լույս պատգամներով:*

*...Հայցենք Աստծուց, որ զորացնի ամենքիս` մեր հայրերի ուղենշած ճանապարհը քայլելու հայրենակերտումի և եկեղեցաշինության սուրբ զգացումներով, անմնացորդ նվիրումով, որպեսզի հայոց գալիքը լինի միշտ լուսավորված, պայծառ և միշտ ժպտացող մեր ժողովրդի զավակներին բոլոր դարերի ընթացքում»*,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց նաև ՀՀ վարչապետին այն բոլոր միջոցառումների համար, որ կազմակերպվեցին ՀՀ կառավարության կողմից` փառավորապես տոնախմբելու Հայոց Գրերի Գյուտի 1600-ամյակը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



ԵՐԵՍՈՒՆՎԵՑ ԽԱՉՔԱՐ-ՏԱՌԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ